## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԻՆԱՍՅԱՆԻ 2012Թ. I-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության պետ՝ Ա.Ղուկասյանի, համայնքի ավագանու և 30 բնակիչների

17.07.2012թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծենիկի գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով.«Տեղական ինքնակառավարման մասին»,«Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում ՝իր լիազորությունները:
2012թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:
Այս խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև նախապատրաստական աշխատանքներ են տարվում հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի համար:
Համայնքն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:
Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները:
Արդար և մաքուր ընթացակարգով, հանգիստ մթնոլորտում անցկացվեց մայիսի 6-ի ՀՀ ԱԺ ընտրությունները:

# ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած պարտքերի հավաքագրման գործում: Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի պահանջները. Սիստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշտումներ կատարելու վերաբերյալ:

# ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Շենիկ համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Գործում է 1 մանկապարտեզ 2 խմբով:

Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Գործում է գրադարան, որն որոշ չափով վերանորոգված և կահավորված է, ունի 4500կտոր գրականություն:

Բուժ.ամբուլատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով. համայնքի բնակչության բուժ. սպասարկումը իրականացվում է ժամանակին և անթերի, նախատեսվում է ավելի ընդլայնել բուժամբուլատորիայի տարածքը:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիրակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան:

Համայնքում ուշադրության կենտրոնում են գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն:

Ազգաբնակչության բնագավառում իրականացվում է ճիշտ և ժամանակին հաշվառում. մշտապես ընթացք է տրվում բնակչության հուզող առօրյա խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում ժամանակին և անթերի իրականացվում է զորակոչը, բնակչության շրջանում իրականացվում է ռազմահայրենասիրական դաստիարակչություն:

Համայնքում զորակոչից խուսափողներ չկան:

Համայնքում գործում է մեկ ջրաղաց և երկու ՀԷԿ-եր, որտեղ աշխատում են համայնքի բնակիչները:

Համայնքի տարածքում հասարակական կարգի խախտումներ չկան:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2012թ. 1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

| հ/հ | անվանումը | պլան տարեկան | 2012թ. 1-ին կիսամյակ | | կատարողական % | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | կիսամյակ | տարեկան |
| 1. | հողի հարկ | 10757.9 | 5000.0 | 4021.0 | 80.4 | 37.4 |
| 2. | գույքահարկ | 600.0 | 275.0 | 256.8 | 93.8 | 42.8 |
| 3. | տեղական տուրքեր | 50.0 | 25.0 | 6.0 | 24 | 12 |
| 4. | տեղական վճար | | | | | |
| 5. | ոչ հարկային եկամուտներ | 1000.0 | 500.0 | 585.5 | 117.1 | 58.6 |
| 6. | պատվիրակված լիազորության /անասնաբուժի/ | 1200.0 | 600.0 | | | |
| 7. | հողի օտարում | 1500.0 | | | | |
| 8. | պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա | 4955.1 | 2477.6 | 2477.6 | 100 | 50 |
| 9. | ընդամենը վարչական բյուջե | 18563.0 | 8877.6 | 7346.9 | 82.8 | 39.6 |
| 10. | տարեսկզբի ազատ մնացորդ | - | - | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 18563.0 | 8877.6 | 7346.9 | 82.8 | 39.6 |

2012թ. 1-ին կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

| հ/հ | ծախսերի անվանումը | պլան տարեկան | 2012թ. 1-ին կիսամյակ | | կատարողական % | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | կիսամյակ | տարեկան |
| | տեղական ինքնակառավարում | 12113.0 | 7116.0 | 5715.8 | 80.3 | 47.2 |
| | մանկապարտեզ | 3500.0 | 1500.0 | 1427.4 | 95.2 | 40.8 |
| | աղբահանություն | 150.0 | | | | |
| | հրատարակչություն շրջաթերթ | | | | | |
| | երիտասարդական ծրագրեր | 100.0 | | | | |
| | սոց. օգնություն | 500.0 | | | | |
| | անասնաբույժ. ծառ. պ/կ | 1200.0 | 600.0 | | | |
| | պահուստային ֆոնդ | 400.0 | 100.0 | | | |
| | գյուղատնտեսություն - հակակարկտային կայանի գազի ծախս | 600.0 | 160.0 | 160.0 | 100 | 26.7 |
| | ֆոնդային բյուջե | 4190.3 | 2390.3 | 1400.0 | 58.5 | 33.4 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 22753.3 | 11266.0 | 8703.2 | 77.3 | 38.3 |

2012թվականի I-ին կիսամյակի ընթացքում աշխատավարձի և այլ վճարումների պարտքեր չկան:

2012թվականի I-ին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 5 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

Համայնքի ղեկավարի 2012թ. I-ին կիսամյակի կատարած աշխատանքները գնահատվել բավարար:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել համայնքի միջոցներով:

## ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է:

Համայնքում կան չլուծված մի շարք խնդիրներ՝

1. Դեռ ավարտված չէ գազաֆիկացման աշխատանքները/անհրաժեշտ է մոտ 13 մլն դրամ/:
2. Վերակառուցման խիստ անհրաժեշտություն ունի մշակույթի տունը և մանկապարտեզը:
3. Համայնքի ներքին ճանապարհների ասֆալտապատում մոտ 5 կմ-ի չափով:
4. մարզահրապարակի կառուցում / կա նախնական համաձայնություն COAF- ի և «ՇԵՆ» բարեգործական կազմակերպության հետ:

**ՇԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԻՆԱՍՅԱՆ**